

2024թ.-ի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 6-ը
ՌԴ ք. Կազան գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Կարեն Բալայան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/
բաժնի պետ /Ժ.Թ.Պ/

Արման Մարության- ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/
բաժնի ավագ մաքսային տեսուչ (շնավարժ-հրահանգիչ)

Ալբերտ Մխիթարյան- ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական
/կենտրոն/ բաժնի ավագ մաքսային տեսուչ (շնավարժ-հրահանգիչ)

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ՌԴ ք. Կազան, 2024թ.-ի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 6-ը:

3. Հրավիրող կողմը.

Հրավերը ստացվել է ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների
ղեկավարների խորհրդի իրավապահ մարմինների ղեկավարների կոմիտեի նախագահ
պարոն Օ.Գ. Գուբայդուլինի կողմից:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղումը նախատեսված էր ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների
ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտեի
կազմում գործող կինոլոգիական հարցերով աշխատանքային խմբի գործունեության
շրջանակներում կայանալիք վերոնշյալ խմբի հերթական՝ 30-րդ հանդիպմանը, ԱՊՀ անդամ
պետությունների մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների միջև
անցկացվող ծառայողական շների 12-րդ բազմամարտի առաջնությանը, ինչպես նաև՝ «ԱՊՀ
անդամ պետությունների մաքսային մարմինների շնավարժ-մասնագետների՝ իրենց կցված
ծառայողական շներով մրցումների կազմակերպման և անցկացման արդիական
հիմնախնդիրները» թեմայով սեմինարին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները.

Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները

- Ժամանակակից ձևաչափով խելացի և նորարարական տեխնոլոգիաների ներդրումը շների
աշխատանքում
- Քայլերը դեպի նոր միտում ձևաչափով գործունեության մեջ
- Սինթետիկ թմրամիջոցների սպառնալիքը և շների կիրառումը դրանց հայտնաբերման
գործում
- Նորարական մեթոդաբանությունը թմրանյութերի և հոգեմետ դեղերի որոնման
մեթոդաբանություն, որոնք կիրառվում էին Ղրղզական Հանրապետության շնավարժ-
մասնակիցների կողմից:
- Շնավարժության հիմունքների հարցերն ու պատասխանները,
- Շների վարքի և վարժեցման ֆիզիոլոգիայի հիմունքները,
- Շների վարժեցման ընթացքում կիրառվող խթանիչները (գրգռիչները),
- Շների աշխատանքը հեշտացնող և բարդացնող պայմանները,

- Տարբեր տեսակի ծառայությունների համար կիրառվող վարժեցման պիտանի շների ընտրությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել մասնակից երկրների կինոլուգիական ծառայության աշխատակիցների, իրենց ղեկավարների, թիմերի ավագների, ռուսական կողմի մեթոդոլոգների հետ, ինչպես նաև՝ ՌԴ Դաշնային մաքսային ծառայության շնագիտական կենտրոնի ղեկավարի հետ:

Քննարկվել են սահմանային և մաքսային տերմինալներում ծառայողական շների կիրառման մոդելները և տեխնիկան, դրանց արդյունավետ կիրառման ձևերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է օդանավակայանի ուղեբեռներում բնական թմրամիջոցների կիրառմամբ ծառայողական շների աշխատանքի նոր մեթոդները:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են մաքսային ծառայությունների շնագիտական կենտրոնների ծառայողական շների ուսուցման մեթոդաբանությունները, թմրամիջոցների դեմ պայքարի և անդրազգային սահմանային հանցագործությունների դեմ պայքարի ապագայի հեռանկարները, թմրանյութերի և հոգեմետ դեղերի, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի, թուֆունի և թղթադրամների հայտնաբերման ոլորտում զարգացումները, նախատեսվող բարեփոխումները, մաքրացել շների բուժման և վարժեցման ծրագրի մարտահրավերներն ու առավելությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ՌԴ համապատասխան կառույցում անցկացնել ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժնի շնավարժ-հրահանգիչների վերապատրաստում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

2025 թվականի երկրորդ կիսամյակում աշխատանքային խմբի միջոցառումների անցկացման առաջարկների քննարկում:

Առաջարկվել է ստեղծել մաքսային մարմինների ծառայողական շների գործունեության ուսումնամեթոդական ձեռնարկ՝ հետագայում անցկացվող մրցումների նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Կարեն Բալայան



Արման Մարության



Ալբերտ Մխիթարյան

